ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/56, 11.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Վերիտաս» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԳՀԱՊՁԲ-2022/ՍԱՐՔ-ԱՊԱԿԻ/ՄԳ»

Գնման առարկան՝ ապակիների մգեցվածությունը չափող սարքերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ ԳՀԱՊՁԲ-2022/ՍԱՐՔ-ԱՊԱԿԻ/ՄԳ» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 21.12.2021թ.-ի թիվ 5 արձանագրությամբ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը,
2. հրավիրել բանակցությունների նոր նիստ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձին

Հասցե ք. Երևան Մելիք Ադամյան 1

«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյանից

Հասցե Նորապատ 9փ, 3տ., հեռ. 099546900

e-mail: veritasllc1@gmail.com

Պատվիրատու «ՀՀ ոստիկանություն»

Հասցե՝ ք.Երևան Նալբանդյան 130

Գնանշման հարցման ընթացակարգի

ծածկագիր <<ՀՀ ԳՀԱՊՁԲ-2022/ՍԱՐՔ-ԱՊԱԿԻ/ՄԳ>>

Գնման առարկա՝ <<ԱՊԱԿԻՆԵՐԻ ՄԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՓՈՂ ՍԱՐՔԵՐ>>

Բ Ո Ղ Ո Ք

1. Վեճի առարկան

1.1 «ՀՀ ոստիկանություն»-ը ապակիների մգեցվածությունը չափող սարքերի գնման նպատակով 2021թ. դեկտեմբերի 6-ին հրապարակել է <<ՀՀ ԳՀԱՊՁԲ-2022/ՍԱՐՔ-ԱՊԱԿԻ/ՄԳ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

1.2. Ընթացակարգը հայտարարվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15 հոդվածի 6 մասի հիման վրա:

1.3. Գնահատող հանձնաժողովը միաժամանակյա բանակցությունների վարման նիստ է հրավիրել 2021թ. դեկտեմբերի 21-ին ժամը 15:00-ին, որը տեղի է ունեցել ք.Երևան Նալբանդյան 130 հասցեում:

1.4.Բանակցությունների ժամանակ Վերիտաս ՍՊԸ ներկայացուցիչը ներկա չի գտնվել, սակայն նիստի հրապարակված արձանագրությանը ծանոթանալուց հետո պարզել ենք, որ Իմպեքս ՍՊԸ ներկայացուցիչը տարբեր քայլերով մի քանի անգամ նվազեցրել է իր գնային առաջարկը, սակայն բանակցություններին մասնակցող Ալիկանտե ընկերության ներկայացուցիչը երեք անգամ հնչեցրել է Իմպեքս ՍՊԸ ներկայացուցչի կողմից արդեն հնչեցված թիվը, այսինքն միտումնավոր կրկնել է Իմպեքս ՍՊԸ հնչեցրած գնային առաջարկը, որպեսզի ընթացակարգը հայտարարվի չկայացած:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը

2017 թվականի մայիսի 4-ի ՀՀ կառավարության 4 մայիսի N 526-Ն որոշման 40 կետի համաձայն. <<ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում **<u>առաջարկված գների նվազեցման</u>** նպատակով ոչ գնային պայմանները

բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),
դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը **հրապարակվում է մյուս մասնակիցների համար**, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը>>:
2021թ. դեկտեմբերի 21-ին ժամը 15:00-ին կայացած միաժամանակյա բանակցությունների ժամանակ հաջորդաբար հնչեցված գնային առաջարկները ըստ հերթականության բերված են ստորև.
Քայլ N1. Իմպեքս ՍՊԸ - 27.800.000 ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - 27.750.000 ՀՀ դրամ
Քայլ N2.Իմպեքս ՍՊԸ - 27.500.000 ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - 27.450.000 ՀՀ դրամ
Քայլ N3. Իմպեքս ՍՊԸ - 27.000.000 ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - 26.950.000 ՀՀ դրամ
Քայլ N4. Իմպեքս ՍՊԸ - 26.800.000 ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - 26.750.000 ՀՀ դրամ
Քայլ N5 Իմպեքս ՍՊԸ - 26.500.000 ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - 26.450.000 ՀՀ դրամ
Քայլ N6 Իմպեքս ՍՊԸ - **26.100.000** ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - **26.100.000** ՀՀ դրամ
Քայլ N7 Իմպեքս ՍՊԸ - **26.000.000** ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - **26.000.000** ՀՀ դրամ
Քայլ N8 Իմպեքս ՍՊԸ - **25.500.000** ՀՀ դրամ, Ալիկանտե ՍՊԸ - **25.500.000** ՀՀ դրամ

Ինչպես երևում է վերոգրյալից, ՔԱՅԼ N6-ից սկսած մինչև ՔԱՅԼ N8, Ալիկանտե ՍՊԸ ներկայացուցիչը **միտումնավոր կերպով կրկնում է** Իմպեքս ՍՊԸ կողմից արդեն հնչեցված գնային առաջարկը՝ նպատակ ունենալով գնահատող հանձնաժողովին ստիպել ընթացակարգը չեղյալ հայտարարել **(տես գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ.N5 արձանագրությունը):**

Միաժամանակյա բանակցությունների իմաստը կայանում է նրանում, որպեսզի մասնակիցները հնարավորության դեպքում նվազեցնեն տվյալ պահին հնչեցված գնային առաջարկները, այլ ոչ թե նույն թիվը հնչեցնեն: Գործընթացի անվանումը <<**նվազեցման շուրջ** բանակցություններ>> է:
Հակառակ դեպքում կստացվի, որ Գնումների մասին օրենքի 15 հոդվածի 6 մասի հիման վրա հայտարարված ցանկացած ընթացակարգ կարելի է միտումնավոր չեղարկել և դրա համար ընդամենը պետք է բանակցությունների ժամանակ կրկնել մրցակցի գնային առաջարկը: Համոզված ենք, որ այդ գործելաոճը ոչ իրավաչափ է և չի բխում գների նվազեցման շուրջ բանակցությունների տրամաբանությունից:

3. Բողոքի պահանջը
1. Պարտավորեցնել <<ՀՀ ԳՀԱՊՁԲ-2022/ՍԱՐՔ-ԱՊԱԿԻ/ՄԳ>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.12.2021թ.-ի N5 արձանագրությամբ կայացված՝ ընթացակարգը չեղյալ հայտարարելու որոշումը:
2. Պարտավորեցնել <<ՀՀ ԳՀԱՊՁԲ-2022/ՍԱՐՔ-ԱՊԱԿԻ/ՄԳ>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին հրավիրել նոր բանակցությունների նիստ:

Կից ներկայացվում է
1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
2.Պետռեգիստրի վկայականը
3. Գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ.N5 արձանագրությունը:

Վերիտաս ՍՊԸ տնօրեն
11.04.2022թ.

Աշոտ Միսիթարյան